



ԳԱՅՉԱԱԱԱԿ

Ե. ՏԱՐԻ. Թիկ 11.

1849

ՅՈՒՆԻՍԻ 1.

ԲԱՐՈՅՑԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Դպրության աղաջառութեան մը որ յառաջադիմութեան միջնէրը հ'արգէլէ:

Դահու մըյետամնացութիւնը, այս ինքն կրթութենէ ետք մնալը՝ կամ իր անձարակ տկարամիտ բնութեանը համար պիտի ըլլայ, կամ զրսի արգելքով մը: Ո՞ւր ազգին 'ի բնէ անկարող անձարակ չըլլալը, առաջ ցուցըցեր ենք. ուրեմն ուրիշ պատճառէ կուգայ իր ետք մնալը. այս պատճառը քաղաքական անտէր վիճակին կամ հարստութիւն չունենալին չէ, ինչպէս ոմանք կը կարծեն, կամ գոնէ այնչափ անկէց չէ որչափ կը կարծուի. վասն զի հիմայ փորձով կը տեսնանք որ քանի մը տարիէ վեր՝ ազգերնիս կը ծաղկի, ոչ քաղաքական վիճակը փոխելով, և ոչ ալ աւելի հարըստ նարով, թերեւս աւելի ալ աղքատ ըլլալով քան թէ առաջ: Ալ մնայ որ իրմէ

ունենայ ներքին պատճառ մը՝ որ իր կարողութիւնը իր ձարտարութիւնը արգիլէ, և իր հոգելից եռանդը դարձնէ ուրիշ բանի մը վրայ. վասն զի “Դմութուն հոգին և թևաւոր միտքը՝ անգործ չեն նստիր”, կ’ըսէ Խիկար: Տաղանդաւոր ազգ մը, ինչպէս մերը, երբոր քաղաքական և բանական զարգացման անհոգ է՝ պէտք է որ իր մտաց և ջանքին ուրիշ զբաղմունք մը գտած ըլլայ:

Ո՞րն է մեր ազգին զլխաւոր հոգ ու զբաղմունք եղածը: . . . “Դմա ակամայ ձառագրեմ, ես ալ Եղիշէ վարդապետին հետ իմ ազգիս հարուածը. և իրեն հետ իմ սիրտս ալ” “Դասնայ յարտասուս . . . և եթէ ‘ի վերայ միոյ

, ազգի այսպէս , որչափ ևս առաւել
,, 'ի վերայ ողջին ազգի միոջ՝ : Ուղ-
լով ուրիշ թանձրագոյն հոգերը , ինծի
կ'երենայ թէ մեր ազգին գլխաւոր հոգ
եղածն է մէկ չափազանց ։ ահասի-
րութիւն մը . հանդերձ կծծութեամբ և
դիւրակեցութեան սէր . իր ուժը ծա-
խած է շահու համար , շահը՝ դիւրա-
կեցութեան համար . ասոնցմով քաղա-
քականութիւնը և բանականութիւնը
ծաղկեցրնել չէ կրցած , վասն զի անոնց
միջոցը՝ որ են ստակ և եռանդն սրտի ,
ուրիշ բաներու ծախեր է :

Իոլոր աշխարհք զիտէ որ Հայոց ազ-
գը մասնաւոր սէր և յաջողութիւն ունի
վաճառականութեան . ազգի մը մէջ որ
վաճառականութիւնը ծաղկած է՝ ան-
կէ շատ բան կրնայ յուսացուիլ . վասն
զի ։ Ոչակութիւնը կը մնուցանէ զտէ-
րութիւններն , կ'ըսէ իմաստուն մը ,
,, վաճառականութիւնը կը զարգացը-
նէ . . . մեր Ոգաթանգեղուն ալ կ'ը-
սէ վաճառականաց համար . ։ ։ Իւ և
,, զաղքատս մեծացուցանեն փոքր ինչ
,, յարգանօք , և զաշխարհ պսակեն
,, նոր և քքնաղ գիւտիւք . նոքա և զփա-
,, փագելի մարդկան զպէտս պատրաս-
,, տեն . . . Ոչոր համար վաճառակա-
նութիւնը ամէն ազգաց փափագելի է .
մեր ազգն ալ իրաւունք ունի փափագե-
լուն , և պարծանք ունի յաջողելուն :
Իայց աս քննելու է , թէ վաճառակա-
նութեամբ՝ զոր իր տէրութիւնը կոր-
սլնցընելին վերջն ալ , և թէրևս ալ
աւելի՝ ծաղկեցուցեր է , ինչ օգուտ բե-
րեր է իրեն , ինչ նոր ու քքնաղ գիւ-
տեր զտեր է . վաճառականութիւնը
Ո՞յցը բարգաւաճանաց կ'ըսուի , մեզի
ինչ բանի մայր եղեր է : Ո՞հ , գմբաղ-
դութեամբ՝ ամուլ կամ սակաւածին
գտնուեր է Հայաստանի մէջ աս մայրը
ազնուական ծնունդներու , ու իր հա-
սարակ թանձր հետեւանքներովը բազ-
մածին : Հայոց տէրութիւնը բոլորովին
վերցուելին վերջը կէս հազար տարի է ,
Հայոց վաճառականութեան տէրու-
թիւնը միշտ բանուկ մնացեր է . վաճա-
ռականութեան արգասեօք այնչափ դա-

րերու մէջ քաղաքականութիւնը և բա-
նականութեան զարգացումը որչափ ա-
ռաջ գնացեր է . ոսկեգլուխ և արծա-
թաբազուկ վաճառականութիւնը որ-
չափ առաջ քալցուցեր է Հայութիւնը
մարդկութեան ձամբուն մէջ : . . .

Անչու աս հարցմանս՝ զուարթ պա-
տասխան մը չկայ : Ո ասն զի վաճառա-
կանութեան քաղցր աղբեր քով՝ շահա-
սիրութեան լեզուահամ աղբիւրն ալ
վազելով , խառնուեր ջուրը դառնացու-
ցեր է . անարդ շահասիրութիւն մը տի-
րեր է ձեռաց և մոտաց . ստակը մոտաւոր
զուարձութեանց , իմաստութեան և
գիտութեանց հրաւիրակ ըլլալու տեղ ,
կամ նոր ստակ քաշելու կամ անցաւոր
վայելմանց գործի եղեր է . ազնուական
բաներէ ձեռքը քաշուած կծկեր է ,
կծծութիւն եղեր է : Ո յս օրուան օրս
ալ որ գիտութիւնք քիչ մը ձանցուե-
ցան մէջերնիս և ծաղկիլ սկսան , զեռ
շահասիրութիւնը չենք տեսնար որ ա-
նոնց հետ կը կուշի . շահասիրութիւնը
չէ որ տղոց կրթութեան մէջ ալ իրեն
յարմար ուսմունքները կը պատուիրէ .
ան չէ որ ամէն բանէ վեր վաճառակա-
նութեան վերաբերեալ բաները տորվիլ
կը յորդորէ . ան չէ որ այնչափ օգտա-
կար և խելք տուող ուսմունքները թող-
լով , մեծասիրտ և հայրենասէր ընող
ազգային զպրութիւնը թողլով՝ կ'եր-
թայ օտար լեզուներու ետեւէ կ'ըլլայ ,
և անանկ լեզուներու՝ որոնց բնական
արժեքը շատ չնշին է , բայց առուտու-
րի բանուկ է :

Իրաւ է որ մարդուս ամենէն պա-
տուական բանը կեանքն է , և շահը
հարկաւոր է կեանքը պահելու համար .
բայց գիւնալու է որ լաւ ապրիլը՝ այս-
ինքն մարդալայել , որ և աստուածա-
վայել կեանքը՝ աւելի հարկաւոր է քան
զիւրութեամբ ապրիլը : Ունէ որ աս
բանս լաւ ձանցուեր՝ չինք լսեր այն
ծաղրելի և դատապարտելի զբոցքը ,
թէ Վերականութիւնը հաց չսերեր ,
զիրն ու զրիզ փոր չեն կշտացըներ . . .
Ծանկ սկզբունք ունեցող ծնողաց տղա-
քը ինչ պիտի փնտուեն . 'ի հարկէ իրենց

համար աշխարհքիս մէջ ամենէն վայելու բան հացը պիտի ըլլայ . ամէն ջանքերնին ան պիտի ըլլայ որ ստակ շահին՝ որպէս զի հաց ուտեն . գիտութիւնները մէկդի թողլու է , մէկէն ձեռագործի կամ վաճառականութեան ետեւ ըլլալու է , որպէս զի հաց ուտեն . . . (Օրհնեալ է տէր , կը կանչէ „ Խիկար , հաց ուտելու համար աշխարհք եկանք . մարդկանց դպրոց ախոռներն պիտի ըլլան , և դասատու խոզերն պիտի առնունք „ . նոյնը ուրիշ տեղ կը հարցընէ . ” Հաց ուտելով որչափ պիտի ապրիս . շատ շատ ութեան տարի . իսկ հացի տեղ իմաստութիւն շահելով՝ յաւիտենականութիւն մը կ'ապրիս „ . դարձեալ կ'ըսէ . ” Հացը մարմին կը շնէ , իմաստութիւնը՝ հոգի „ : Խրաւունք ունի Խիկար . վասն զի իրենց կենաց նպատակ հացը դնողներէն՝ խիստ քիչերը իրենց բնութեան երջանիկ վախճանին կը հանին . բայց որոնք որ իմաստութիւնը իրենց վախճան են դրեր , անոնք խելքով աս կեանքէս վերջն ալ երջանիկ կ'ըլլան :

(Ա) որ քերականութիւնը հաց քերեր , հապա հացն ալ քերականութիւն կը բերէ , աշխարհադիտութիւն կը բերէ , բնագիտութիւն կը բերէ , աստղագիտութիւն կը բերէ . հասարակ ձեռնարուեատ մը միտքը կը պայծառացընէ , քաղաքականութիւն կը սորվեցընէ , աշխարհիս մէջ եղածը չեղածը կը ճանչցնէ . վաճառականութիւնը՝ օրէնք , փիլիսոփայութիւն , բարոյական , դրապութիւն կը սորվեցընէ . քսակ քսակի քով սնտուկի մէջ դնելը՝ կը սորվեցընէ մարդուս առ ինքն , առ հայրենիս , առ մարդիկ և առ Խստուած ունեցած պարտքերը : Ի՞նդհակառակն՝ ուսմունքներն չեն որ շահու ալ նոր և մաքուր ճամբայ կը բանան . քերականութիւնը չէ որ շատին հաց գտնելու պատճառ եղեր է . խելքը չէ որ արդար կերպով և յաջողութեամբ վաստեկցընել կուտայ . իմաստութիւնը չէ որ վաճառականութեան ճամբաներն ալ կ'ընդառակէ , կը դիւրացընէ և ծռութիւնը կը

վերցընէ : Խարոյագիտութիւնը չէ որ ստրկին գէշ հետևանքները կտրել կը սորվեցընէ : Ո՞էկ խօսքով , մէկ գիտութիւն մը աւելի սորվիլը՝ քիչ մ'ալ աւելի զմարդս անբաններէն կը զատէ և Խստուծոյ բնութեանը կը մօտեցընէ . մէկ պատառ մը աւելի հացը , մէկ փափկութեան զուարձութիւն մը՝ քիչ մը աւելի զմարդս անբանի կը մօտեցընէ , մէկ աւելի ստակ մը որ կրնար մարդկութեան օգուտ մը ընել և փուռ կը մնայ կամ կը ծախուի՝ մէկ անարգանք մըն է մարդկութեան : Խտենօք՝ երբոր տգիտութիւնը ամօթ կը սեպուէր { ունաց մէջ՝ մեր ըսած իմաստութեան համար ագահ ու զուարձութեանց համար շուայլ մարդուն մէկը շատ մտածելին ետքը կամք կ'ընէ վերջապէս զոհ մը ընել ու իր զաւակը ուսման տալ : Ո՞երթայ կը հարցընէ իմաստասիրի մը թէ ինչ տարեկան վարձք կ'ուղէ տղուն ուսմունք սորվեցընելու . իմաստասիրը կ'ըսէ անոր ինչ որ սովորականն էր . բայց ան որ միտքը դրեր էր թէ փափկութե ու զուարձութեան բաները միայն կը բնան ծանրագին ըլլապ , երբոր լսեց տարեկան վարժապետին վարձքը՝ վեր վեր ընկաւ ու կանչեց . Խյզափ վարձքով ես թէ ատրոնը նստարան մը կրնամ վարձելու որ տղաս բողը տարին երթայ զուարձանայ : Խմացաւ իմաստասիրը թէ ինչ կերպ մարդու հետ կը խօսի , և որովհետեւ ան ատենը թէ ատրոնի նստարանները քարեւ էրին , դարձաւ ըստ մարդուն . Ծզէկ է՝ գնա ըսածդրբէ ու տղադրէ թէ ատրոն խաւրէ որ երթայ ու քեզի պէս քարը քարի վրայ նստի : Ո՞րչափ արդեօք ասանկ քարէ մարդիկներ կրնան գտնուիլ հիմնայ ալ որոնց ուկին ու արծաթը իրենց քովը շատ աւելի յարգի ըլլայ :

Խյոյ բաներս միայն հարուստներուն համար չկարծուի : որովհետեւ քիչ են այն աստիճանի աղքատները՝ որ չկարենան գոնէ կրթութեան սկզբունք մը առնել տալ իրենց աղոցը . թէ որ աղքատը գիտնար երեւմն հարկաւոր երեցածէն ալ զինքը զրկել , թէ որ չա-

փաւոր սեպուածը՝ յիրաւի զինքը չափաւորել, և թէ որ հարուստը՝ իրեն աւելորդէն կարօտին մասն հանել, մեր ազգն ալ հիմակուան վիճակին մէջ կը ընար բոլորովին դաստիարակութիւն առնուլ. բաւական է թէ ձանցնար որ կը թութենէ պատուական բան չկայ աշխարհիս վրայ, վասն զի ինքն է մարդկութիւն. թէ որ ձանցնար՝ որ անօթութեամբ ապրելէն շատ գէշ է տգիտութեամբ ապրիլը : Ծգէտը արդէն մեռած է մտօք, անօթին դեռ կ'ապրի. մարդ մը կուշտ կամ փափիկակեաց ապրելուն համար չէ գովուած, բայց իմաստութեան ետևէ ընկող և անօթութեամբ ապրողները միշտ գովելի են եղեր. առջիններուն համար նախանձ և անէծք կարդացուեր է, ետքիններուս համար օրհնենք և զարմանք :

Ուր են հիմայ այն պորտաբոյծ, կարձամիտ նախարարները, որ անշուշտ աւելի համգիստ ապրելու համար՝ իրենց վիճին փառքը, նախանձելի լըշակունեաց թագաւորութիւն մը յանձն առին կործանել, և մոխրապաշտից հնազանդիլ. թերեւս անոնցմէ ունանք փափագածնուն պէս դիւրութեամբ ապրեցան ալ. բայց այս 1400 տարի է, ամէնքը անոնց թուք ու մուր կուտան : Իսկ անոնց ներհակ՝ քանի մը տառապեալ անձինք ալ կային ան ատենը, թէպէտ և ալւորած՝ կարօտութեան համար սոտքով ձամբայ կ'ընէին, մեղուի պէս իրենց քաղցր իմաստութեան բեռները իրենց կունակը շալկած էին, և պանդուխտի պէս իրենց հայրենի հայաստանին գաշտերուն մէջէն կ'անցնէին, ու երբոր յոգնած, քրտնած՝ իրիկունը տեղ մը համանէին, այն մեր՝ շահը ուսմունքէ վեր դնող և անձնդիւրութիւնը քան զիմաստութիւն ընտրող նախազգիները՝ անոնց հանգչելու տեղ մ'ալ չէին տար, և ոչ զանկ մը գիտութեան կամ գիտնոց համար . . . Ո՞վ ոք . . . ի ձէնջ թոշակոյազազ մեր, ո՞վ ոք . . . վարդապետացն մաղթանս . . . ո՞վ ոք . . . յերթալս մեր բեռնաբարձս, ո՞վ ոք . . . ի գալն մերում հանգիստ, ո՞վ ոք տուն

, կամ օթանոց մեզ պատրաստեաց . . . Ալ չէք լորենացւոյն բողոքը. և ահա այսօրուան օրս ինքն է և իր նման ընկերներն՝ որ ազգերնուս ամենէն մեծ պարծանքներն են, բոլոր աշխարհիս գիմաց ալ փառաւոր են, երկնից ալ գովելի են: Ուս որ լորենացին ալ ոմանց պէս միամիտ գտնուելով հաւատար՝ թէ քերականութիւնը հաց ըւերեր, այս օրուան օրս աշխարհքիս մէկ մեծ մասը մութ պիտի մնար իր պայծառ Պատմութենէն զրկուելով. թէ որ անիկայ իր փորը կշաացընել մտածէր, քանի քանի ազգային և եւրոպական մոքեր անօթի պիտի մնային այնչափ ծանօթութիւններէ՝ որ իր գլքերէն կ'առնունք: Լողիչ՝ լեռները պտըտելով մարմինը մարախի պէս ըրցած, Դազար իր հայրենական ստացուածքն ալ Դազարշապատու ուսումնարանին համար ծախելով, հազար ու մէկ նեղութիւնքաշելով և հալածուելով, թողուցին մեզի այն պատմաբանութիւնները՝ որ Հունաց ամենէն ընտիր ոճով գրած պատմութիւններուն կը համեմատուին. անդին դաս մը մարդիկ՝ որոնց վիճակը կը հարկադրէր ասոնց նըման ըլլալու, բայց անշուշտ պզտիկուցմէ հայի քան թէ քերականութեան դաս լսած ըլլալնուն՝ ասոնց վրայ կը ծիծաղին, մեզի լըմենքէն ու լիւզանդինէն նոր վարպետներ կուգան ըսելով. և սակայն այն նոր վարպետներն ինչուան այս օրս ալ վարպետ են հայկական դպրութեան, իսկ այն ծաղը ընողներն՝ այբի կտոր մ'ալ չեն թողուցած մեզի :

Ուկ երկու օրինակ ալ բերենք որ իմացուի թէ իմաստութիւնը՝ փափկութենէ ցանկալի է, թէ աղքատն ալ ուղելու ըլլայ՝ հնարք կը գտնէ բան սորվելու, կը յուսանք որ բարեսէր ընթերցողք կը ներեն խօսքերնուս երկայնութեանը. վասն զի այսօր կ'ուղենք լսմբնցընել վերցընել մեր մէջէն սաքերականութեան և հային դատաստանը: Լոկէք պատանիք, եկէք ծնողք պատանեաց, որ վաճառական ըլլալ,

վաճառական ընել կը փափագիք . այս փափագս նոյնպէս զօրաւոր էր ազգեր՝ նուս մէջ ան ատենն ալ որ Հայաստանէն Յունաստան թէ շահասիրութեան թէ իմաստափրութեան ձամբաներն բաց էին . շատերը իժիր կ'երթային առջինէն՝ որ շահին հարստնան . գնացին , եկան , շահեցան , ապրեցան , մեռան , մեզի չոր անուն մ'ալ չթողուցին . անոնց հետ մէկտեղ պատանի մ'ալ ելաւ խոր Հայաստանէն՝ բայց իմաստափրութեան ձամբան բռնեց Ի՞թէնք հասաւ . բայց ինչպէս որ գիտէք՝ Ի՞երականութիւնը հաց չքերեր , ինքն ալ հացի կարօտ էր . բանի տեղ չդրաւ պատանին , հացի տեղ գիրք գնեց ունեցած ստրկովը . մոտաւ Ի՞թէնք . բայց աղքատութիւնը զինքը չթողուց . ինքն ալ աղքատութեան հետ կոռւեցաւ , անօթութեան հետ կոռւեցաւ , խելքն ու միտքը աւելի բարակցուց , անուն հանեց , սիրելի եղաւ , ձեմարանին դուռը բացուեցաւ իրեն : Ի՞այց այն սոսկալի աղքատութիւնը կպեր էր հետը , քերականութիւնը դեռ հաց չէր տար . պատանին ոգեպահիկով միայն կ'ապրէր . ան ալ բաւական չէ , պէտք էր կոկ զգեստ մ'ալ ունենայ որ կարենայ ձեմարան մտնել . հիմայ ի՞նչ ընէ աղքատ տղայն : Կը գտնէ իրեն նման աղքատ և ուսումնասէր տղայ մ'ալ , գըլուխ գլխու կուտան , երկուքը մէկ ըզգեստ մը կը շննեն . որ մը մէկը կը հագնի կ'երթայ ձեմարան , խելք կը սորվի , ընկերը անկողնի մէջ կամսենեակը փակուած կը մնայ , մէկալ օր ընկերը կը հագնի կ'երթայ ձեմարան խելք սորվելու , ինքը փակուած կը մնայ գիրք կարդալով . ասանկով քերականութիւն ալ կը սորվին , ձարտասանութիւն ալ , իմաստափրութիւն ալ , որով թէ հաց կը վաստրկին թէ զգեստ : Եւ ան Հայատանէն եկած աղքատ անհաց պատանին գիտէք ի՞նչ կ'ըլլայ . երբոր Ի՞թէնք քի ձեմարանին ձարտասանութեան փարպէտը կը մեռնի՝ ամէն աշխարհքէնուիրակ կուգայ որ Ի՞րոյերեսիոս նստի աթոռ , աս է պատանւոյն անունը .

Ի՞րոյերեսիոս կ'ըլլայ առաջին ձարտասան աշխարհի իր ատենը , Պիդիգոր Ի՞ստուածաբանի պէս աշակերտ մը կ'ունենայ , ամէն իմաստուններ բարեկամ կ'ունենայ , Աստամնդ կայսեր հացակից կ'ըլլայ , Յուլիանոս կայսր իրեն շողոքորթ կ'ըլլայ որ Ի՞րոյերեսիոս հաճի իրեն վրայ գովեստ գրել , Հռոմ՝ համբաւը լսելով իրեն արձան կը կանգնէ , քրիստոնէայք իրեն հաւատակցութեանը համար , հեթանոսք իրեն անհամեմատ հանձարոյն համար զինքը հաւասար կը պատուեն . Յունաստանին մէջ Հացը շատցրնելու համար Ի՞րոյերեսիոս աղերս մը կուտայ , մէկէն ցորենին մաքսը կը վերցուի : Ծեսնաք ի՞նչ զօրութիւն ունին եղերքերականութիւնը և գիտութիւնը . թէ որ մեր փափուկ և նազուկ պատանիներէն ունանք մազերնին իւղելու և զգեստնին կոկելու համար ծախսած ստակնին մէկ բերէին՝ նոր գիտութիւն մը կը հնային սորվիլ , կամ պզտի դրատուն մը ստանալ :

Ի՞նչ ըսենք հապա փափուկ տիկնայց , գթասիրտ մարց , որ զաւկընուն կրթութեան համար ստակ չեն գտներ , բայց իրենց զիւրակեցութեան և զարդերուն համար միշտ բան մը կը գտնեն , վասն զի ասիկայ իրենց պարտք կը սեպէն , առջինը չէ . մանկի ընեն անոնք ալ Ի՞րոյին մօրը ըրածը : Ի՞սիկայ ալ Ի՞րոյերեսիոսէն քիչ մը վերջ է . մայրը մանկամարդ որբեարի մնաց , երկրնէն քիչ բան ժառանգելով , բայց բնութենէ շատ հարուստ ժաւանգեր էր կանանց ցանկալի եղած չնորհքները , որով շատերը երկրորդ հարսանեաց կը հրաւիրէին զինքը . բայց անիկայ իր առջի պտղին կրթութիւնը վեր դրաւ քան իրեն փափկութիւնը : Ի՞սեր է եղեր Ի՞թէնքին անունը և իմաստութիւնը . կ'ելէ մեծ Հայաստանէն , կ'առնու իր մէկ հատիկը , երկայն և տաժանելի ձամբայ կտրելով կը հասնի Ի՞թէնք , կը ներկայացնէ տղան Ի իբանիոս իմաստակին , որ Ի՞րոյերեսիոսէն վերջը առաջին պերծախօս կը սեպուէր և Ուկերերանի վարպէտն էր , և կ'ուզէ որ

իր առջին սկսանի | իդոյ հոռմերէնի առաջին դասը , որուն կրթութեանը համար՝ բերնին ապրուստը , գլխին հագուստը կտրեր էր : Այս զարմանայ կը մնայ | իրանիոս , և իր մէկ բարեկամին կը գրէ աս բաներս . և մօրմէն վար չմընալու համար՝ մեծ հոգ կը տանի տղուն վրայ . որ կ'ըլլայ ուսումնասէր , ճարտասան , առաքինի և կտրիչ մարդ մը , զինուորի պէս կեանք անցընելով և փիլսոփիայի պէս կենակցելով , իր վարպետին ալ մեծ բարեկամը կ'ըլլայ . և մեզի տարակոյս կը թողութէ իր իմաստութեանը վրայ՝ չէ նէ մօրը իմաստասիրութեանը վրայ աւելի զարմանանք :

Ի՞ս օրինակներուս պէս կը հաւատանք որ զանազան ատեն ելած են ազգերնէս կրթասէր և իմաստասէր անձինք , բայց տրտմութեամբ աւելի յայտնի կը տեսնենք Խորենացւոյն հետ . Օ անիմաստասէր բարս առաջնոցն մերոց . . . զ'առ յիմաստան աղամարութիւն և զանկատարութիւն ու գւոյն բանականի . . . չէ թէ անկարող ըլլանուն համար , հապա խելունին փափիկութեամբ ասլրելու տուածը ըլլանուն , աւելի ժողվել ուգենուն քան թէ սփուել օգտակար գործքերով և շինութեամբք : Ի՞ս բանիս փորձը ազրով ալ կը տեսնենք . գիտենք որ մեր հին թագաւորները՝ Խիոյ երկրորդական թագաւորներէն էին , երբեմն առաջին կարգի ալ , միշտ բաւական ուժ և շատ հարստութիւն ունեցեր են . և սակայն մեծագործ բաներ չեն շինած , ինչպէս կը տեսնենք յլշիպտոս , Յունաստան , Բարելոն , Պարսկաստան և ուրիշ տեղուանք . իրաւ հայաստան շատ տակնուվրայ եղեր է , բայց ճարտարութիւնը կրնար բռնութեանց ալ յաղթել , ինչպէս որ յաղթեր է ուրիշ աշխարհներու մէջ , ինչպէս նաև հայաստանին մէջ կեցած է 4000 տարուան Կամիրամակերտը , ինչպէս կան քանի՝ մը մնացուածք մեր Տիգրանեան և Տրդատեան մեծ թագաւորաց ալ , ինչպէս կան շատ մը եկեղեցիներ՝ որ բարեպաշտութեան հոգին կանգնեց : Իսկ

մեր թագաւորներուն և իշխաններուն շատը ինչ յիշատակարան թողուցին . ամուր ամուր բերդեր իրենց գանձերը պահելու , խոր գուբեր ստացուածքնին ծածկելու . շահասիրութեան նշան մը և ոչ առատաձեռնութեան : Վսենու մեծ պատմիչը և զօրավարը՝ որ առկէ 2250 տարի առաջ հայաստանէն անցաւ , աչքովը տեսաւ աս հայոց պահարանները և կը յիշէ . նոյնը ուրիշ գրուածի մէջ , թէպէտ և պատմութիւնը հիւսուածոյ է , կը պատմէ թէ երբոր Խրուանդ Այակաւակեացը Վարաց պատերազմին մէջ յաղթուեցաւ , ամենքն ալ թողուցին փախան ունեցածնին լեռներու ու ամրոցներու մէջ պահելու . փոխանակ որ պէտք էր միաբան դային թագաւորը ու երկիրնին պաշտպաննելու : Ո՞եր նախարարներուն շատ անգամ անմիաբանութեան , թագաւորէն զատուելուն պատճառը՝ աս շահասիրութիւնը և դիւրակեցութիւնն էր . մեր աշխարհքին այնչափ ոտնակոխ ըլլալուն մէկ պատճառն ալ աս է : Ի՞շակունեաց տէրութիւնը ինչպէս վերջացաւ յիշեցինք . Ի՞ազրատունեացը աւելի յայտնի է , մէկ իշխանի մը , մէկ անարժան երիցու մը ազահութիւն՝ հայաստանին թագը կորսընցուց : Հին հայոց մնացորդներն ալ երկու յուդայամիտ անձինք 30 թուման ստըկի համար Կահաբասին մաանեցին : Ի՞գահութէն և կաշառակրծութեան հետ , շահասիրութեան և ճնշասիրութեան ոգին այնպէս տիրեց , որ վերը յիշած իմաստութեան ցանկալի գանձը՝ գրեթէ անյիշատակ մնաց շատ զարեր . մեր նախնեաց քրտինքով թրջած գրքերը՝ ինչուան վանքերու մէջ ալ փոտեցան . ձեռագիր մը կարդալը՝ մոգութիւն դարձաւ . և թէ որ 1400 տարիէն վերջը ազգային հեղինակի մը գործ առաջին անգամ տպագրութեամբ՝ ի լոյս ընծայեցաւ , և երկու միլիոն հայոց իմաց տրուեցաւ , շատ հեղ 200 հոգի փափագող չգտաւ :

Ի՞ելի ցաւալին և ամօթալին կ'ուզէք լաել . գիտեմ որ չէք ուղեր , ինչպէս

Ես ալ ըսել չեմ ուզեր , սակայն յիշենք զգուշութեան համար . չէ թէ միայն զբքին և զպրոցին երեսը տեսնել չուզողներ եղան և կան , հապա նաև ուրիշներն ալ արգիլող , նախանձը կամ այլ անարդ պատճառ մը առած՝ ինչուան գիրքը ձեռքէն խլել և առատութեան կանգնած ուսումնարանը կծծութեամբ գոցել ջանացող . փափագելով որ իմաստութեան համար ծախուածը՝ կամ չնցին զուարձութեան մը համար ծախուեր , կամ սնտուկին մէջ իրեն ժանդուերես եղբարցը քով մնար :

Ի՞սպիսի հոգւով , ձեռքը ստակով դոց , Հայաստան քանի դարեր անցուցեր է . և ինչ վայեր է . ինքը չէ որ ինքը զինքը միշտ խեղձ և թշուառ անուաներ է : Եվրաւի խեղձ է այն որ կրնայ վայել և չվայեր . աղքատ եմ կ'ըսէ . յիրաւի աղքատ է որ օգտակարէն կը զրկէ զինքը . ասոր համար | ամբորնացւոյն մեծ սիրտն ալ այրած իր ատենուան Հայերուն համար՝ բաղդատելով | Արոպացւոց գաղթականներուն հետ՝ կ'ըսէ , անոնք միշտ կուտան ողորմութիւն և չեն աղքատնար . “ Այ դու ” հանապազօր ուժութեամբդ՝ մնաս ” և այնպէս աղքատ . տես , և որսիս ” Ես տեսի բազում անգամ , զի նոքա ” ուր և բնակեն ունին զփարթամու ” թիւն . և մեք ընդ ամենայն աշխարհու ” սեփական ունիմք ընդ ստրկութեանս ” և զաղքատութիւնս . . . և երանի թէ աղքատութիւն ըլլար , և ոչ ագահութիւն՝ որ հայր է չարեաց , և ամէն բարի փափագանաց ատեցող և չիրող . թանձր մտածմունքներ և փափագներ միայն մնուցող :

Ի՞այց թողլով աս սե յիշատակները , թէ որ մէկ մ'ալ զառնանք տեսնելութէ առատածեռնութիւնը և մանաւանդ անշահամիրութիւնը որչափ զօրաւոր միջոց է ազգին յառաջադիմութեան , մեծութեան , ուսմանց զարգացման , նոյն իսկ մեր ազգէն կը գտնենք փառաւոր օրինակներ . կը գտնենք Տիգրան մը Հայկազնեան՝ որ նախ Ճարտարութեամբ տէրութիւնը հարստացուց ,

վերջը հարստութիւնը խոհեմութեամբ բաժնելով իր ժողովրդեանը՝ արուեստները ծաղկեցուց , քաղաքականութիւնը ան աստիճանի առաջ տարաւ՝ որ ամէնքը բարեկեաց և մէյմէկ դիւցազն դարձան կ'ըսէ պատմիցը : Ալ գտնենք Տրդատ մը՝ որ արքունի գանձերով | ուսաւորչայ Ճամբաները դիւրացուց , և քիչ ատենի մէջ կրօնից և ուսմանց վարժարանները անթիւ ըրաւ : Ալ գրտնենք | ուսմապուհ մը՝ որ քանի մը գանձ ծախելով վաստրկեցաւ մէկ Հայկական թարգմանութիւն մը , որ անմահ պսակ է իրեն յաւիտեան : Ալ գրտնենք | շոտ Ա , որ առատածեռնութիւնի իշխամներուն սիրելի ըլլալով 400 տարուընէ վեր Հայոց կորուսած թագը կանգնեց իր Բագրատունի Ճակտին վրայ : Այսակէս կը տեսնենք | Խութինեան թագաւորներն ալ որ առատածեռնութեամբ կանգնեցին և պահեցին տէրութիւննին . մանաւանդ | և ոնք , որ ամենէն մեծ և զօրաւոր և առաջին պսակաւոր եղաւ , ամենէն ալ առատածեռն գտնուեցաւ , չէ միայն համազգեացը , այլ և օտարաց , անոր համար ամենուն սիրելի էր , և անունը կայսերաց և քահանայապետաց քով կը յիշուէր : Իւելի զարմանք . Պապայ պէս գարշելի թագաւորն ալ՝ տամելի եղաւ նախարարներուն՝ որոնք չդիմացան | Խոտաշիսի , ինչու որ Պապ | Յոյժ , անընչասիրաբար ցուցանէր զիւր այսորդական և առատաբար կեայր | . . . | Խորուանդ բռնաւորութեամբ թագաւորեց . մեր նախարարները բռնաւոր չէին սիրեր , և սակայն ասոր հետ հաշտ կեցան , վասն զի Խորուանդ առատածեռն և շինող մարդ էր :

Վսոնց նմանն օրինակներ ալ ունինք , բայց ասոնք ընդհանուր ազգին ոգին չեն . մեր մէջէն ալ ելած են մեծասիրտ և առատածեռն մարդիկ որ բոլոր աշխարհիս օրինակ կրնան ըլլալ բայց գէշը ան է՝ որ իրենց ազգին մէջ հետևող կամ զարմացող չունենալուն համար ,

ազգին սպարութենեն վեր բաներ սե-
պուած են . այս բանս վարպետ կերպով
մը կը յիշեցընէ մեզի ՚ Կողիկ , երբոք
կ'ըսէ հայկացն | և ոն կայսեր համար
թէ եր “ Ռաատաձեռն ’ի տուրս և ’ի
” բաշխել , ոչ որպէս զհոռոմ ոիշդ , զի
” չէ սովորութի հոռոմոց առատ լինել ,
” և ոչ յիւրեանց լեզուն ասի առատ .
” այլ նա որդի հայոյ էր (Ա ասլի) . . .
այս խօսքը լսելով հոռոմատեաց մը կ'ու-
ռի , և կը կարծէ որ իրեն պէս կամ իր-
մէ աւելի պակասաւոր մը գտնալով իր
երեսը կը Ճերմըկի . բայց մտիկ ընէ
վարպետ պատմիքը բնապէս կը վերջա-
ցընէ խօսքը . կ'ըսէ . “ Եւ առաւել
” քան զհայ առատատուր , էր | և ոն .

Բայց ես աւելի մեծ և փառաւոր
կերպով կ'ուզեմ խօսքս վերջացընել , և
շատ երջանիկ կը սեպեմ մեր օրերը՝ որ
ազգերնուս ծաղկիլը կը տեսնայ՝ ՚ Կա-
հասիրութեամք ազգաէր անձանց . ո-
րոնք յիրաւի վեհագոյն գտնուելով քան
զիրենց առջինները և ժամանակակից-
ներէն շատը , ազգին կարօտութիւնը
իրենց փափկութենէն վեր դրին . և
փոխանակ իրենց քանի մը զաւակաց
բաւական ժառանգութիւնը աւելի շատ-
ցընելու , հարիւրաւոր զաւակներ ունե-
ցան իրենց կանգնած դպրոցներուն մէջ .
փոխանակ քանի մը անձանց փուճ և
սուտ երջանկութեան մը պատճառ ըլ-
լալու , ձմարիտ երջանկութեան պատ-

ճառ եղան շատերու . փոխանակ կռուոյ ,
նախանձու , մատնութեան , զեղխու-
թեան առիթ արծաթը իրենց կարծ օ-
րերուն ծախելու կամ մնտուկին տակ
թողու , աւետարանական քանքարնե-
րուն պէս շահեցուցին դպրոցներով ,
թոշակաւոր վարպետներով , ընկերու-
թիւններով , տպել տուած զըքերով ,
գործարաններով , և այլն : ՚ Կանց օրի-
նակը կը յուսանք՝ որ ուրիշներուն ալ
վարշամակով ծրարածը բանալ տայ , և
ազգին նոր դիւրութիւն մը պարզեէ .
կը յուսանք ալ որ անոնց օրինակով ի-
րենցմէ պղտիկներն ալ սորվին թէ ստա-
կը բնչ բանի պէտք է եղեր գործածել .
և ամէնքն փափագին ամէն բանէ ա-
ռաջ կրթութեան համար ծախել . քա-
ւորներն ալ կրթութեան փափագով
վազեն բարերարաց բացած դոներուն :
Դակ այն վեմախոչ և ազնուամիտ բա-
րերարները և ազգասէրները՝ անտարա-
կոյս ըլլան որ իրենց անունը իրենց նախ-
նի թագաւորներէն ալ վեր պիտի գը-
րուի . իրենց երախտիքը սրտէ սիրտ
իջնալով դարէ դար պիտի անցնի . իսկ
իրենց վարձքը անկէ պիտի առնուն՝ որ
ըսաւ . “ ՚ Ճնիւ , ծառայ , որ ’ի սակա-
ւուգ հաւատարիմ զտար , ’ի վերայ
բազմաց կացուցից զքեզ . մուտ յուրա-
խութիւն Տեառն քո , :

Հ . Դ . Մ

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն Տ Ե Վ Ե Կ Ո Ւ Թ Ւ Ւ Ն

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ո Ւ Թ Ւ Ւ Ն

Ե Լ Ք Գ Ր Ի Գ Ո Ր Ի

Ա Ե Պ Հ Ո Յ Յ Ե Ր Ա Ն Գ Հ Ա Ր Ա Ն Գ Հ Ա Ր Ա Ն
Օ Ա Խ Ա Խ Ո Յ Յ Ե Ր Ա Ն Հ Ա Տ Ե Ա Լ յ ե ր կ ն ի ց բ ա ր ձ ր հ ր ա ւ ե ր
Պ Ա Կ Ե ղ ի ն օ ք թ ո ու ց ե ա լ թ ե օ ք զ ա յ ք ը ն ա ր
Դ մ է ջ զ ի շ ե ր ը զ ք ք ա ր ա ր յ ը ի ւ ա ղ օ թ կ ե ր .

Դ ա ղ ը ր դ ի ն տ ա ր ե լ ք ա յ լ ը ն դ ա յ լ ,
Վ ա ր ս է լ ա ր դ ե օ ք թ է ի ս ա յ տ ա լ :